ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՄ

REPUBLIC OF ARMENIA

A. I. ALIKHANYAN NATIONAL
SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE)
FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ.(37410) 341 500, ֆաքս(37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel.(37410) 341 500, fax. (37410) 349 392

N 01-14/528
28.11.2022թ.

ԷԼԱՐ ԳՈԼԴ ՍՊԸ /ООО «ELAR GOLD»/-Ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի /այսուհետ նաև՝ հիմնադրամ/ կարիքների համար 2022 թվականի մայիսի 24-ին հայտարարված գիտական սարքերի ձեռքբերման ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-22/17 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել ԷԼԱՐ ԳՈԼԴ ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 9718026114, հեռ.՝ +79606117771, էլեկտրոնային հասցե՝ elargold@yandex.ru), վերջինիս հետ 12.07.2022թ-ին կնքվել է ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-22/17-1 ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի ընդհանուր գինը կազմում է 7220000 (յոթ միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, իսկ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 90 օրացուցային օր՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված:

Հաշվի առնելով, որ մատակարարման ժամկետները էականորեն խախտվել են՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 ենթակետը, Հիմնադրամի կողմից 28.11.2022թ-ից ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-22/17-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք սահմանված կարգով և ժամկետներում ապահովել պայմանագրի կատարման ապահովումը՝ 722000 (յոթ հարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովումը՝ 1083000 (մեկ միլիոն ութանասուներեք հազար) ՀՀ դրամի չափով վճարների գանձումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ Ա. ԱՊՐԱՀԱՄՅԱՆ